

ԿԱԹՈՂԻԿՈՍՍԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

1999 Յուլիս 4, Կիրակի երեկոյեան ժամը 8ին Ս. Էջմիածնի Վեհարանի շէնքին մէջ տեղի ունեցաւ, հանգուցեալ Գարեգին Ա. Վեհափառ Կաթողիկոսի Յունիս 29ին վախճանման պատճառաւ, Հայաստանեայց Եկեղեցւոյ Եպիսկոպոսաց եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի չորս աշխարհական անդամոց համագումարը, ընտրելու համար Ամենայն Հայոց Կաթողիկոսական Տեղապահը: Հրաւիրուած էին եպիսկոպոսաց դասու 49 եւ Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի աշխարհական չորս անդամներ: Ներկայ

էին 82 սրբազաններ եւ չորս աշխարհականներ:

Գաղտնի փութարկութեամբ եւ երեք փութախոյզներու ստուգումով Կաթողիկոսական Տեղապահ ընտրուեցաւ Գեր. Տ. Ներսէս Արք. Պօղոսեան 24 փութով: Մնացեալ փութները բաժնուած էին ըստ հետեւեալիմ.- Գեր. Տ. Գարեգին Արք. Ներսիսեան 10 փութ, Գեր. Տ. Վիգէն Եպս. Այվազեան մէկ փութ, եւ մէկ փութ ձեռնադրուած:

ԵՊԻՍԿՈՊՈՍՍԱՅ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՈՒՄ
ՄԱՅՐ ԱԹՈՒ ԱԲ. ԷՋՄԻԱՇՆՈՒՄ

Յուլիսի 9ին Մայր Աթոռ Սր. Էջմիածնում գումարուեց եպիսկոպոսական ժողովի հերթական նիստ՝ նախագահութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Տ. Ներսէս Արք. Պօղոսեանի, ատենապետութեամբ Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ հայոց պատրիարքների: Նիստի սկզբում ընտրուեց եպիսկոպոսական ժողովի նոր դիւան: Ի պաշտօնէ դիւանը նախագահում է Ամենայն Հայոց Կաթողիկոսը կամ Կաթողիկոսական Տեղապահը, ատենապետում Երուսաղէմի

եւ Կ. Պոլսոյ պատրիարքները: Ատենապետներ ընտրուեցին Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանը եւ Տ. Արքաեան Եպս. Մկրտչեանը: Ժողովն ընտրեց նաեւ եպիսկոպոսական ժողովի օրակարգը կարգաւորող յանձնախումբ, որի կազմում ընդգրկուեցին Եզնիկեանի հայոց առաջնորդ Տ. Զաւէն Արք. Զինչիւնեանը, Գերմանիայի հայոց Առաջնորդ Տ. Գարեգին Արք. Բեհչեանը եւ Լիոնի եպիսկոպոս Տ. Նորվան Զաքարեանը: Ժողովը քննարկեց Հայ Եկեղեցւոյ առջեւ դրուած մի շարք հարցեր:

ՄԱՄԼՈՅ ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ